**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

**2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍ-ՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՐԱՔՍ ԳԵՏԻ ՎՐԱ ՀԻԴ-ՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾԵԼՈՒ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱ-ՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈ-ՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան 13 նոյեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարի տեղակալ Ա. Սիմոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդ-վածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդված-ների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2011 թվականի դեկ-տեմբերի 23-ին Երեւանում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջեւ Արաքս գետի վրա հիդրոէլեկտրակայան կառուցելու եւ շահագործելու բնագավառում

համագործակցության մասին» համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2012 թվականի հոկտեմբերի 15-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

**1.** «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջեւ Արաքս գետի վրա հիդրոէլեկտրակայան կառուցելու եւ շահագործելու բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրությունը (Արձանագրություն) ստորագրվել է 2011 թվականի դեկտեմբերի 23-ին՝ Երեւանում:

Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջեւ Արաքս գետի վրա հիդրոէլեկտրակայան կառուցելու եւ շահագործելու բնագավառում համագործակցության մասին համաձայնագիրը (Համաձայնագիր) ստորագրվել է 2007 թվականի մարտի 19-ին եւ վավերացվել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2007 թվականի հոկտեմբերի 4-ին:

Արձանագրությամբ մի շարք հղումներ են կատարվում Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Իրանի Իսլամական Հանրապետության «Թավան Աբ Արազ Քոմփանի» ընկերության միջեւ 2010 թվականի հոկտեմբերի 15-ին ստորագրված՝ «Կառուցում-Տնօրինում-Շահագործում-Փոխանցում (ԿՏՇՓ) հիմունքով «Մեղրի» հիդրոէլեկտրակայանի կառուցման համար թույլտվության պայմանագրին» (Թույլտվության պայմանագիր): Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրության համաձայն՝ 2012 թվականի հոկտեմբերի 25-ին Հայաստանի Հանրապետության կառավարության անունից՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարության եւ Իրանի Իսլամական Հանրապետության «Թավան Աբ Արազ Քոմփանի» ընկերության միջեւ կնքվել է «Կառուցում-Տնօրինում-Շահագործում-Փոխանցում (ԿՏՇՓ) հիմունք-

ներով Մեղրի հիդրոէլեկտրակայանի կառուցման համար թույլտվության պայմա-նագրի վերաբերյալ» փոխըմբռնման հուշագիր: Վերջինով փոփոխություններ են կատարվել Թույլտվության պայմանագրի մի շարք դրույթներում, այդ թվում՝ 2013 թվականի ապրիլի 15-ն ամրագրվել է որպես Թույլտվության պայմանագրի ուժի մեջ մտնելու նախապայմանների կատարման վերջնաժամկետ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերոհիշյալ փաստաթղթերը փոխկապակցված են, պարունակում են միմյանց հղումներ եւ դրանց կատարումն առանձին հնարավոր չէ, ուստիեւ վերջիններս սահմանադրական դատարանը դիտարկում է համակարգային միասնության մեջ եւ Արձանագրությամբ ստանձնվող պարտավորությունների սահմանադրականությունը գնահատում այդ փաս-տաթղթերում ամրագրված դրույթների համադրությամբ:

**2.** Արձանագրությամբ ամրագրված փոփոխություններով Համաձայնագրի 2-րդ հոդվածը շարադրվում է նոր խմբագրությամբ, համաձայն որի՝ «Մեղրի եւ Ղարաչիլար հիդրոէլեկտրակայանների կառուցումն իրականացվում է Կողմերի միջեւ փոխհամա-ձայնեցված ժամկետներում», ինչպես նաեւ Համաձայնագրի 11-րդ հոդվածից հետո ավելացվում նոր՝ 11.1-րդ հոդված:

**3.** Արձանագրությամբ, հաշվի առնելով նաեւ Համաձայնագրում ավելացվող նոր 11.1-րդ հոդվածի բովանդակությունը, Հայաստանի Հանրապետությունը, մասնավո-րապես, ստանձնում է հետեւյալ պարտավորությունները.

- Իրանի Իսլամական Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությանը (Ընկերություն) եւ նրա բոլոր ենթամատակարարներին ու ենթակապալառուներին (բացառությամբ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող ենթամատակարարների եւ ենթակապալառուների), որոնք ներգրավված են Արաքս գետի վրա հիդրոէլեկտրակայանի կառուցման եւ (կամ) շահագործման աշխատանքներում, հիդրոէլեկտրակայանի կառուցման եւ շահագործման ժամանակահատվածում ազատել բոլոր հարկերից, տուրքերից, մաքսային վճարներից եւ այլ գանձումներից ու վճարներից.

- Ընկերության, նրա բոլոր ենթամատակարարների ու ենթակապալառուների անձնակազմի, ինչպես նաեւ նրանց հետ համատեղ ապրող ընտանիքների անդամների անձնական օգտագործման իրերը Հայաստանի Հանրապետություն ներմուծվելու դեպքում ազատել բոլոր տեսակի մաքսային վճարներից՝ անկախ այն հանգամանքից՝ Հայաստանի Հանրապետություն դրանք ներմուծվում են ժամանակավոր, թե մշտական.

- երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կամ պատասխանատվություն կվերցնի վճարելու բոլոր հարկերը, տուրքերը, մաքսային վճարները եւ այլ գանձումներն ու վճարները, որոնք կսահմանվեն կամ կպահանջվեն Հայաստանի Հանրապետության, տեղական կամ համայնքային մարմինների կամ կազմակերպությունների կողմից, կամ միջոցներ կձեռնարկի դրանցից ազատելու համար Ընկերությանը եւ նրա բոլոր ենթակապալառուներին ու ենթամատակարարներին.

- երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կամ ճիշտ ժամանակին միջոցներ կձեռնարկի Ընկերությանը եւ նրա բոլոր ենթակապալառուներին եւ ենթամատակարարներին ազատելու համար Արաքս գետի վրա հիդրոէլեկտրակայանի կառուցման եւ շահագործման ծրագրով սպանձնած եւ Թույլտվության պայմանագրի 8-րդ հոդվածով նախատեսված բոլոր հարկերից, տուրքերից, մաքսային վճարներից եւ այլ գանձումներից ու վճարներից, կամ կվճարի բոլոր հարկերը, տուրքերը, մաքսային վճարները եւ այլ գանձումներն ու վճարները եւ կպահպանի դրանց առնչվող բոլոր կանոններն ու կանոնակարգերը եւ չի կապարի կամ անուշադրության չի մատնի կամ չի վնասի որեւէ բանի կատարմանը, որը կարող է որեւէ ձեւով անբարենպաստ ազդեցություն ունենալ կամ վնասել Ընկերության շահերը կամ իրավունքները.

- կրել պետական թույլտվությունների տրամադրման, պահպանման եւ գործողության ժամկետի երկարացման կամ դրանց օգտագործման հետ կապված բոլոր ծախսերը, անկախ դրանց բնույթից.

- ապահովել, որպեսզի Թույլտվության պայմանագրի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը թույլտվության ժամանակահատվածում տեղանքը կառուցապատման եւ ցանկացած այլ պահանջվող իրավունքով (եթե կիրառելի է) անվճար տրամադրի Ընկերությանը.

- երաշխավորել, որպեսզի Հայաստանի Հանրապետության կառավարությունը շահագործման ժամանակահատվածում Ընկերությանն անվճար ապահովի Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության սահմանի երկայնքով բնական հոսքով առկա ջրով՝ հիդրոէլեկտրակայանի անխափան եւ բնականոն աշխատանքն ապահովելու համար, Թույլտվության պայմանագրին համապատասխան, այնպիսի եղանակով, որ այդ ջուրը այդ պայմանագրում նշված նպատակներից բացի այլ նպատակներով չօգտագործվի.

- երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը պատասխանատու է այն թույլտվությունների ձեռքբերման համար, որոնք թույլ կտան Ընկերությանը ստանալու շինարարության համար անհրաժեշտ՝ Արաքս գետից պահանջվող ամբողջ ջուրը՝ մինչեւ այն ժամկետը, որը նշված է Թույլտվության պայմանագրի՝ շինարարության փուլային գրաֆիկում.

- երաշխավորել, որ հիդրոէլեկտրակայանի կառուցման, էլեկտրական էներգիայի արտադրության եւ արտահանման թույլտվություններն Ընկերությանը կտրամադրվեն անվճար եւ առանց ֆինանսական երաշխիքների ու Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձի կարգավիճակ ձեռք բերելու պահանջների կիրառման.

- երաշխավորել, որ Թույլտվության պայմանագրով նախատեսված գնումը Հայաստանի Հանրապետության կառավարությունը կկատարի առանց մրցույթի, Իրանի Իսլամական Հանրապետության համապատասխան ընկերությունից՝ որպես «բանակցային ընթացակարգով՝ առանց գնման հայտարարությունը նախապես հրապարակելու» գնում, եւ առանց լիցենզիայի առկայության:

**4.** Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոհիշյալ պարտավորությունները վերաբերելի են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի եւ Հայաստանի Հանրապետության կառավարության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքներով նախատեսված լիազորություններին:

**5.** Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրության համաձայն՝ մասնավորապես, Մեղրի ՀԷԿ-ի շահագործման 15-րդ տարվա ավարտին վերջինս պետք է անհատույց փոխանցվի հայկական կողմին, ընդ որում, համապեղ փորձարկումներով պետք է հիմնավորվի, որ ՀԷԿ-ի էլեկտրամեխանիկական եւ հիդրոմեխանիկական սարքավորումներն ունեն օգտակար շահագործման առնվազն 10 տարվա ռեսուրս, իսկ թունելը եւ ինժեներական կառույցները՝ առնվազն 30 տարվա ռեսուրս: Ըստ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրության՝ Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության որոշմամբ բարձրացվել է Հայաստանում իրականացվող ծրագրերի ֆինանսավորման համար սահմանված չափաքանակը, ներդրող ընկերության եւ Իրանի Իսլամական Հանրապետության էներգետիկայի նախարարության «Թավանիր» ընկերության միջեւ ստորագրվել է պայմանագիր ծրագրի իրականացման ողջ ընթացքում Մեղրի ՀԷԿ-ի

արտադրած էլեկտրաէներգիայի՝ փոխհամաձայնեցված սակագնով երաշխավորված գնման վերաբերյալ:

**6.** Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են միջազգային իրավունքի նորմերին եւ սկզբունքներին, ունեն փոխշահավետ բնույթ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

**1.** 2011 թվականի դեկտեմբերի 23-ին Երեւանում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջեւ Արաքս գետի վրա հիդրոէլեկտրակայան կառուցելու եւ շահագործելու բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

**2.** Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

13 նոյեմբերի 2012 թվականի
ՍԴՈ- 1057